ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03
ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-19/3 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ
(դիզելային վառելիքի ձեռքբերման)

ք. Երևան 18.02. 2019թ.
ժամը՝ 12:00

Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի
տեղակալի պաշտոնակատար՝ Գ. Հարությունյան

Անդամներ՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության
տրանսպորտային բաժնի պետի պարտականությունները կատարող՝ Ա. Սահակյան

Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության
տրանսպորտային բաժնի մասնագետ՝ Ա. Խոսրոֆյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության
գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Կ. Սերոբյան

1.Որակավորման **պահանջները հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին**

1. Սահմանված կարգով ստացվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեյի նկատմամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցման դրական պատասխանը:

2. Գնահատող հանձնաժողովը գնահատեց բավարար ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Ֆլեշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 1-ին չափաբաժնի ապրանքի տեխնիկական բնութագրի համապատասխանությունը հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրերին, ինչպես նաև հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

2.Հանձնաժողովը որոշեց.

ա/ 1-ին չափաբաժնով ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Ֆլեշ» ՍՊԸ-ին:

բ/ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում:

գ/ պայմանգիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի 10 (տասը) տոկոսի չափով՝ միակողմանի հաստատված հայտարարություն՝ տուժանքի կամ կանխիկ փողի, կամ բանկային երաշխիքի ձևով, որը ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Նախագահ՝	Գ. Հարությունյան	
Անդամներ՝	Ա. Սահակյան	
	Ա. Խոսրոֆյան	
Քարտուղար՝	Կ. Սերոբյան	